ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 09 » դեկտեմբերի 2025թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 11

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 09-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված յոթերորդ նստաշրջանի հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով և ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու ինը անդամները, բացակա էին՝ Արայիկ Ներսիսյանը, Արման Չիբուխչյանը, Հարություն Պապյանը, Վանո Չատինյանը, Միշիկ Գևորգյանը և Կարլեն Վերմիշյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 09-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 09-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

3) Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին արտոնություն տրամադրելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. մայիսի 08-ի թիվ 33-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին՝

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄՀԸ/GIZ) ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Էդուարդ Մելիքսեթյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 42-րդ կետով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հաշվի առնելով 04.03.2025թ. կայացած հանրային քննարկումների արդյունքները, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ավագանին որոշեց՝ տալ համաձայնություն՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Տեղական զարգացման հիմնադրամ» ծրագրի «Համայնքների կարողությունների բարելավում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում» նախաձեռնության շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին ներկայացված ծրագրային հայտ-առաջարկի իրականացմանը և դրա շրջանակներում նախատեսված միջոցառումների համաֆինանսավորման նպատակով՝ Լոռի Բերդ համայնքի 2026թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրում: Ծրագրի բյուջեն կազմում է 32000000 (երեսուն երկու միլիոն) ՀՀ դրամ, որից՝ 20 %-ը համայնքի ֆինանսավորմամբ և կազմում է 6400000 (վեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ՝ KFW գերմանական բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում՝ Լոռի Բերդ համայնքի Ագարակ և Ուռուտ բնակավայրերում իրականացվող ջրամատակարարման համակարգերի վերակառուցման և կոյուղագծերի կառուցման շինարարությունների նպատակով՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին տրամադրել արտոնություն՝ ազատել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բոլոր տեսակի տեղական տուրքերի և վճարների վճարումից:

9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025Թ. ՄԱՅԻՍԻ 08-Ի ԹԻՎ 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Էդուարդ Մելիքսեթյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով 2025թ. նոյեմբերի 18-ին կայացած հանրային քննարկման արդյունքները՝

1. **Ավագանին որոշեց՝** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. մայիսի 08-ի թիվ 63-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ ըստ ստորև ներկայացված հավելվածի.

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2025թ. դեկտեմբերի 09-ի № 68-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկում:

2. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի կենտրոնների բարեկարգում:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և Ուռուտ, Սվերդլով, Լեջան և Ագարակ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի ջեռուցման համակարգի կառուցում, ներքին հարդարման աշխատանքների իրականացում և տարածքի բարեկարգում:

9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ը, ժամը՝ 12:00-ն

9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

***Նիստի փակում*:**

Ավագանու անդամներ՝

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Գրիգորյան Աննա Հրայրի

Սերոբյան Անի Սամվելի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Վահրամ Պապիկյան _____

Նիստը արձանագրեց Անի Մարտիրոսյանը _____

Կ.տ.